Լրամշակված նախագիծ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-800-09.12.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18 ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 299-րդ հոդվածի 1-ին մասում «տասից տասնհինգ տարի ժամկետով» բառերը փոխարինել «տասնհինգից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 302-րդ հոդվածում «ութից տասնհինգ տարի ժամկետով» բառերը փոխարինել «տասներկուսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ (Պ-800-09.12.2020-ՊԻ-011/1) ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջին ընթերցում

Պ-800-09.12.2020,04.02.2021-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18 ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի (այսուհետա Օրենսգիրք) 299-րդ հոդվածի 1-ին մասում «տասից տասնհինգ տարի ժամկետով» ~~«տասից տասնհինգ տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա»~~ բառերը փոխարինել «տասնհինգից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ» ~~«տասնհինգից քսան տարի ժամկետովա գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա կամ ցմահ ազատազրկմամբ»~~ բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 302-րդ հոդվածում «ութից տասնհինգ տարի ժամկետով» բառերը փոխարինել «տասներկուսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-800-09.12.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	Կառավարություն				
1	ՀՀ Կառավարություն	Նախագիծ 1-ին հոդված	«տասնհինգից քսան տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա կամ ցմահ ազատազրկմամբ բառերը փոխարինել «տասնհինգից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2	ՀՀ Կառավարություն	Նախագիծ 2-րդ հոդված	«տասներկուսից քսան տարի ժամկետով» բառերը փոխարինել « տասներկուսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3	ՀՀ Կառավարություն	Նախագիծ	բարձրացնել խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված առաձին հանցագործությունների, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածով (ցեղասպանություն), 393.1-րդ հոդվածի 3-րդ մասով (ցեղասպանության ուղղակի և հրապարկային հրահրումը) նախատեսված հանցակազմերի համար որոշակի ժամկետով ազատազրկման ձևով սահմանված պատիժների ստորին շեմերը,	Չի ընդունվել:	Չի ընդունվել: